

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ՄԻՋ -ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ 19Դ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ
Կ'ԻՐԱԳՈՐԾՈՒԻՆ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ.Նահանգներու միջ-մասնաճիւղային 19րդ մարզախաղերը Յուլիսի առաջին շաբաթավերջին յիշատակելի օրեր պարգեւեցին Փրովիտէնսի Մաունթ Փլէզընթ *հայ սգուլի* եւ Բօտ Այլենտ Գօլէճի մարզադաշտերը համախմբուած շրջանի հայութեան, որ Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառութեան բարձր մթնոլորտի մէջ, չորս օր շարունակ հետեւեցաւ ոտնագնդակի ,վօլիպօլի, պասքէթպօլի,լողալու, վագքի, թենիսի եւ փինկ-փօնկի հետաքրքրական մրցումներու:

Սոյն մարզախաղերուն կը մասնակցէին Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի 10 մասնաճիւղերէն աւելի քան 600 մարզիկ-մարզիկուհիներ, որոնք կու գային Պօսթընէն, Շիքակոյէն, Նիւ Եօքքէն, Նիւ Ճըրզիէն, Ֆիլատելֆիայէն, Ֆլօրիտայէն, Ուաշինկթընէն, Փրովիտէնսէն, Տիքսոնիէն, եւ Թօրօնթոյէն: Մարզիկները իջեւանեցան Փրովիտէնսի «Մարիօթ» պանդոկին մէջ ու հիւրընկալուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Փրովիտէնսի մասնաճիւղին կողմէ, որ ճիգ չէր խնայած մարզական եւ ընկերային լաւագոյն մթնոլորտը ստեղծելու այս առիթով:

ՄԱՐԶԱԽԱՂԵՐ

Միջ-մասնաճիւղային այս մարզախաղերը տեղի ունեցան Հինգշաբթի 2 Յուլիսէն մինչեւ Կիրակի 5 Յուլիս, ծիլ, փոքր, կրտսեր, երեց եւ վերջերան մարզիկ-մարզիկուհիներու դասակարգերով: Ծնողներ ու բարեկամներ ոգեւորիչ խանդավառութեամբ կը շրջէին դաշտէ դաշտ, քաջալերելով իրենց մարզիկները, որպէսզի նորանոր յաղթանակներ արձանագրեն իրենց մասնաճիւղերուն համար, առանց անդրադառնալու թէ իրենց Հ.Մ.Ը.Մ.Ի անդամակցութիւնը ինքնին ամենամեծ յաղթանակն է մեր հայեցի ազգային դիմագիծի պահպանման ճիգերուն մէջ:

ՃԱՇԿԵՐՈՅԹ- ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Ուրբաթ, 3 Յուլիսի երեկոյեան, Բօտ Այլընտ Գենվէնշըն Կեդրոնին շքեղ սրահին մէջ պարահանդէս տեղի ունեցաւ ու երգիչ Ժագ Յակոբեանի ու D.J.Յարութի երգերով ու պարերով երիտասարդութիւնը խանդավառ մթնոլորտի մէջ մինչեւ ուշ ատեն անցուց հաճելի երեկոյ մը:

Շաբաթ, 4 Յուլիսի երեկոյեան, Բօտ Այլընտ Գենվէնշըն Կեդրոնին շքեղ սրահին մէջ տեղի ունեցաւ յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը հովանաւորութեամբ՝ Արեւելեան Միացեալ Նահանգներու թեմի բարեջան Առաջնորդ Բարձ. Տ. Օշական Արք. Զօլոյեանի ու ներկայութեամբ՝ բազմաթիւ հրաւիրեալներու եւ աւելի քան 700 հայորդիներու:

Օրուան յայտագրի պաշտօնական բաժինով, հանդիսավար քոյր Մակի Նալպանտեան բացաւ երեկոն բարեգալուստ մաղթելով բոլոր ներկաներուն ,մանաւանդ հայ երիտասարդութեան որոնց նուիրուած է 2009 տարին ըստ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի «Հայ Երիտասարդութեան Տարի»ի հռչակումով:

Ապա ան ներկայացուց օրուան պատուոյ հիւրերը՝ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեան, Արժ. Տ. Կոմիտաս Պաղսարեան՝ Հովի Փրովիտէնսի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ, Պատուելի Յակոբ

Մանճելիքեան, օրուան թագաւոր՝ Պրն. Արամ Կարապետեան , Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝ Ընկ. Ժանօ Աւետիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ Եղբ. Վահրամ Դանիէլեան, Հ.Ե.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝ Ընկ. Անդրանիկ Աւետիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Օ.Մ.ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Ընկ. Քնար Գիլէճեան, Համազգայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Ընկ. Սարգիս Մինասեան, Փրովիտէնսի մասնաճիւղի ատենապետ՝ Եղբ. Սարգիս Եփրեմեան եւ Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ :

Ան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի Փրովիտէնսի մասնաճիւղի ատենապետը՝ Եղբ. Սարգիս Եփրեմեան որ հակիրճ խօսքով շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչ յանձնախումբերուն, որոնց տքնաջան աշխատանքին շնորհիւ ,այս շաբաթավերջը ընթացաւ սահուն կերպով:

Յաջորդ խօսք արտասանողը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Եղբ. Հրաչ Մեսրոպեան, որ յայտնեց իր խորին շնորհակալութիւնները Փրովիտէնսի մասնաճիւղին, այս տարուան մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբին եւ հիւրընկալ մարմնին: Ան բնորոշելէ ետք 91 տարիներ առաջ գաղափարապաշտ հայորդիներու կողմէ հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ին իրագործած յաջողութիւնները, յայտնեց թէ անդամներու անսակարկ նուիրումին ու մեր ժողովուրդի աջակցութեան շնորհիւ, Հ.Մ.Ը.Մ.ը կը շարունակէ դաստիարակել հայ երիտասարդը որ ան տէր կանգնի մեր ազգային իրաւունքներուն ու լծուի արդար Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն:

Հ.Յ.Դ Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝ Ընկ. Ժանօ Աւետիսեան իր խօսքով վեր առաւ Հ.Մ.Ը.Մ.ի ինիսուն տարիներու տարած անխոնջ աշխատանքը , տիպար ու մաքրամաքուր հայ մարզիկն ու սկաուտը կերտելու իր յամառ պայքարը, միշտ կառչած՝ «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին: Ան աւելցուց նաեւ թէ աշխարհի հինգ ցամաքամասերու վրայ ապրող հայորդիներու միջեւ կապ հաստատելով, շատ դժուարին պայմաններու տակ , Հ.Մ.Ը.Մ.ը դեռ կը շարունակէ սերունդներ պատրաստել ու դաստիարակել, շնորհիւ իր համակիրներուն տաճած գուրգուրանքին ու անոնց հետեւողական եւ աննահանջ քաջալերանքին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ Եղբ. Վահրամ Դանիէլեան իր պատգամով գնահատեց Շրջանային Վարչութեան եւ Փրովիտէնսի կազմակերպիչ յանձնախումբի տարած աշխատանքը յաջողութեամբ պսակելու 19րդ միջ-մասնաճիւղային խաղերը: Ան նշեց թէ այս ձեռնարկը ինքնին ապացոյց է Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր՝ Շաւարշ Գրիսեանի երազին՝ հայ երիտասարդութիւնը համախմբելու մէկ հովանիի տակ: Եղբ. Դանիէլեան շեշտեց թէ աշխարհի չորս ծագերուն Հ.Մ.Ը.Մ.ի տարած կազմակերպչական աշխատանքը կը գնահատուի ոչ թէ միայն մեր կողմէ, այլ օտար շրջանակներու մէջ եւս, օրինակ տալով 2005ին Աթէնքի մէջ տեղի ունեցած 7-րդ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերու ընթացքին, Յունաստանի նախագահ Գարօլօս Բաբուլյասի անկեղծ մէկ արտայայտութիւնը յունական սփիւռքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի նման երիտասարդութիւնը համախմբող կազմակերպութիւն ստեղծելու իր երազին մասին:

Վերջին խօսք առնողը եղաւ Արեւելեան Մ. Նահանգներու Առաջնորդ՝ Բարձ. Տ.Օշական Արք. Չօլոյեան որ իր խրատաստիչ պատգամով գովքը հիւսեց 91 տարեկան երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ին , շեշտելով որ ան հայ երիտասարդին կու տայ հայու ինքնութիւն , հաւատարմութիւն մեր ազգային արժէքներուն, ու փոքր տարիքէն անոր կը սորվեցնէ կարգ ու կանոն, յարգանք օրէնքի նկատմամբ: Սրբազան հայրը աւելցուց թէ մեր պարտականութիւնն է յաջորդ տասնամեակներուն, պայքարիլ անտարբերութեան դէմ, տէր կանգնիլ մեր ազգային ամբողջական իրաւունքներուն , օժանդակել Հ.Մ.Ը.Մ.ին ամէն ձեւով, նամանաւանդ պահելով մեր զաւակները անոր խրոխտ շարքերուն մէջ, որպէսզի անոնք դառնան արժանատր պաշտպանները մեր կրօնքին, մշակոյթին ու հայրենիքին:

Յայտագրի պաշտօնական բաժինի աւարտին, ներկաները Գալիֆօրնիայէն ժամանած երգիչ Սագոյի, իր նուագախումբի եւ D.J. Յարութի ճոխ երգերով ու պարերով խանդավառ պահեր ապրեցան մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր, մանաւանդ երբ Ուաշինկթընէն՝ Քրիս Արապեան իր երգած յեղափոխական երգերով թնդացուց սրահը:

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Կիրակի, 5 Յուլիս 2009ի կէսօրին, *Հօբ Հայ Սգուլի* մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ միջ-մասնաճիւղային 19րդ մարզախաղերուն փակման շքեղ հանդիսութիւնը, հովանաւորութեամբ՝ Արեւելեան Մ. Նահանգներու թեմիս բարեջան Առաջնորդ Բարձ.Տ.Օշական Չօլոյեանի, եւ ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի բազմահարիր համակիրներու: Իսկական վայելք մըն էր ականատես ըլլալ 700է աւելի մարզիկներու, սկաուտներու, արենոյշներու, գայլիկներու եւ կակուղ թաթիկներու տողանցքին: Տողանքը կ'առաջնորդուէր Փրովիտէնսի սկաուտներու նորակազմ շեփոքախումբի կողմէ :

Փակման հանդիսութեան հանդիսավարն էր Եդր. Արա Նալպանտեան, որ Տօքթ. Նատին Աբրահամեան-Լօմպարտիի հետ փոխն ի փոխ արտասանուած հայաշունչ խօսքերով կը ներկայացնէին հպարտ ու բարձրաճակատ կերպով տողանցող մեր ապագայ սերունդը : Տողանցողները կը հետեւէին ծածանող հայկական դրօշին, զինանշանին ու Փրովիտէնսի մասնաճիւղին պատրաստած՝ Հ.Մ.Ը.Մ.ի շուշանաձաղիկ յուշատախտակին, «Բարձրացիր-Բարձրացուր» նշանաբանով թեւաւորուած : Սկաուտներու շարքին կը հետեւէր հայկական տարագով զարդարուն՝ մարզիկներու մետալները ձեռքին ք. Լենա Մինասեան: Տողանցքին սկիզբը ծափահարութիւններով գնահատուեցաւ Փրովիտէնսի գաղութին ծանօթ՝ Տիկ. Տէպի Բժոժեան, որ տպաւորիչ ձեւով մեներգեց ամերիկեան, հայկական, գանատական եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները:

Եդր. Արա Նալպանտեան տեղեկութիւններ կու տար իւրաքանչիւր մասնաճիւղի մասին, մինչ նոյն մասնաճիւղի անդամները հպարտօրէն կը տողանցէին պատուոյ հարթակին առջեւէն: Տողանցողներու վերջին խումբը կը ներկայացնէր Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու հաւաքական խումբը, որ պիտի մասնակցի Օգոստոս 2009ին Հայաստանի մէջ տեղի ունենալիք համահայկական մարզախաղերուն :

Ապա ան ներկայացուց օրուան պատուոյ հիրերը՝ Բարձր. Տ. Օշական Արք. Չօլոյեան, Արժ. Տ. Կոմիտաս Պաղսարեան՝ Հովի Փրովիտէնսի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ, Պատուելի Յակոբ

Մանճելիքեան, օրուան թագաւոր՝ Պրն. Արամ Կարապետեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝ Ընկ. Ժանօ Աւետիսեան, Հ.Ե.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝ Ընկ. Անդրանիկ Աւետիսեան, Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ Եղբ. Վահրամ Դանիէլեան, Հ.Ս.Ը.Ս.ի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Օ.Ս.ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Ընկ. Քնար Գիլէճեան, Համազգայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Ընկ. Սարգիս Մինասեան, Փրովիտէնսի մասնաճիւղի ատենապետ՝ Եղբ. Սարգիս Եփրեմեան եւ Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչները: Պատուոյ հիւրերու շարքին էր նաեւ Բօտ Այլընտ Նահանգի ընդհանուր գանձապահ՝ Պրն. Ֆրէնգ Գաբրիօ:

Խօսք տրուեցաւ Փրովիտէնսի մասնաճիւղի ատենապետին որ շնորհակալութիւն յայտնեց մարզախաղերուն նպաստած բոլոր յանձնախումբերու անդամներուն, որոնց համագործակցութեամբ մարզական այս մեծ ձեռնարկը իրագործուեցաւ: Ապա խօսք առաւ Եղբ. Հրաչ Մեսրոպեան, որ յայտնեց Շրջանային վարչութեան շնորհակալութիւնները մարզիկներուն ու պատասխանատուներուն, որոնք փայլուն նոր էջ մը արձանագրեցին այս շաբաթավերջին, իրենց Հ.Ս.Ը.Ս.ականի վայել կեցուածքով: Ան յատկապէս շնորհակալութիւն յայտնեց պատասխանատու մարմիններուն, որոնք ընդառաջելով Շրջանայինի անցեալ տարուայ կոչին՝ այս տարի բազմապատկեցին իրենց շարքերը, մաղթելով որ անոնք ձգտին աւելիին, հասնելով ամէն հայ պատանիի ու երիտասարդի անոնց մէջ սերմանելով ազգի ու հայրենիքի ծառայելու գաղափարը:

Ապա Ընկ. Ժանօ Աւետիսեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի կողմէ ողջունելէ ետք Հ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքը, գնահատեց իր անդամներուն ճիգը, ուժը, կորովն ու հետեւողականութիւնը, «միշտ պատրաստ», կոչումին գիտակից նուիրումով ու կեցուածքով, գօտեպնդուած «բարձրանալու եւ բարձրացնելու» հրամայականով: Ընկ. Աւետիսեան եզրակացուց իր խօսքը վերահաստատելով Դաշնակցական ընտանիքին պատրաստակամութիւնը միշտ կանգնելու Հ.Ս.Ը.Ս.ի կողքին մեր շրջանի տարածքին վրայ:

Յայտագրի կիսուն, մարզախաղերու կազմակերպիչ Փրովիտէնսի մասնաճիւղը գործադրեց գեղարուեստական բաժին մը, ներկայացնելով հայոց պատմութեան մէջ կարեւոր անդրադարձեր հայկական մարզախաղերու մասին, հին Նաւասարդեան եւ յունական ողիմպիական խաղերու օրերէն մինչեւ Հ.Ս.Ը.Ս.ի հիմնադրութիւնն ու անոր կազմակերպած մարզախաղերը: Տօքթ. Նատին Աբրահամեան-Լօմպարտի պատշաճ եղանակի ընկերակցութեամբ ներկայացուց պատմականը, որուն հետ միաժամանակ ցուցադրուեցան հսկայ պատկերները թափնէկիր հերոս-մարզիկին, Յունաստանի 286րդ ողիմպիական մրցումներու ըմբշամարտութեան ախոյեան՝ Արշակունեաց տոհմի Տրդատ Գ. Թագաւորին, 291րդ ողիմպիական խաղերու կռիւմարտութեան ախոյեան՝ Վարազդատ թագաւորին, 1911ին անմահ Շաւարշ Գրիսեանի կողմէ հիմնուած «Մարմնամարզ» ամսաթերթին ու վերջապէս Հ.Ս.Ը.Ս.ի երեք հիմնադիրներուն՝ Շաւարշ Գրիսեանի, Գրիգոր Յակոբեանի եւ Յովհաննէս Հինդլեանի: Օրուայ ասմունքողը աւարտեց պատմական բաժինը ոգեւորելով ներկաները Միեր Դաւիթեանի «Պատիւ ու Փառք Քեզ Հ.Ս.Ը.Ս.» քերթուածի տպաւորիչ մեկնաբանութեամբ:

Գեղարուեստական յայտագրի աւարտին, խօսք տրուեցաւ օրուան թագաւոր՝ Բօտ Այլընտ նահանգի նախկին ծերակուտական ու Փրովիտէնսի գաղութին հանրաժանօթ ազգային Պրն.Արամ Կարապետեանին, որ Բօտ Այլընտ նահանգի դպրոցներուն մէջ, հայկական ցեղասպանութեան ուսուցումի բանաձեւը անցնել տուաւ ու պաշտօնապէս օրէնք դարձուց մեր նահանգի կրթական նախարարութեան մէջ: Պրն. Կարապետեան , որ միշտ նեցուկ կանգնած է հայ երիտասարդական բոլոր կազմակերպութիւններուն, դառնալով դաշտին վրայ եղող մարզիկներուն ու սկաուտներուն, իր շնորհաւորական ու քաջալերական խօսքերը ուղղեց անոնց, շեշտելով որ երիտասարդ սերունդն է որ իր յարատեւութեամբ ու վճռակամութեամբ պիտի յաղթահարէ բոլոր դժուարութիւններուն այս օտար ամիսներուն վրայ:

Եղբ. Վահրամ Դանիէլեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ շնորհաւորեց բոլոր մասնաճիւղերու պատասխանատուները, կարգադիր յանձնախումբերը ու բոլոր համակիրները որոնք իրենց ներկայութեամբ քաջալերեցին սոյն մարզախաղերը: Խօսքը ուղղելով մարզիկներուն, ան յայտնեց իր գոհունակութիւնը մարզախաղերու սահուն ընթացքին եւ յաջող արդիւնքներուն համար, շեշտելով որ մարզիկներու չափաչափիչ մեծամասնութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի վայել իր կեցուածքով օրինակ դարձաւ այն մի քանիներուն որոնք կը փորձէին խաղերու ընթացքը խանգարել, ինչ որ անընդունելի է Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն համար: Եղբ. Դանիէլեան փոխանցեց Կեդրոնական Վարչութեան սրտագին շնորհաւորութիւններն ու շնորհակալական զգացումները բոլոր պատասխանատու մարմիններուն որոնք ամէն ճիգ թափեցին որ այս շաբաթավերջը յաջողութեամբ պսակուի:

Վերջին խօսք առնողը եղաւ Սրբազան Հայրը որ իր խրախուսիչ պատգամով օրուայ խանդավառութիւնը կը հասցնէր իր գագաթնակէտին: Ան իր դէմքը դարձնելով երիտասարդ մարզիկներուն որոնք Ամերիկայի եւ Գանատայի ամիսներուն ծնած՝ կը մեծնան Հ.Մ.Ը.Մ.ի շուրթին ներքեւ, կը վստահեցնէր թէ անոնք կը պատկանին հայ ցեղին ու հայ եկեղեցիին, թէ անոնք ունին Հայաստանը որպէս հայրենիք ու հայերէնը որպէս մայրենի լեզու: «Ձեր ինքնութիւնը ծնողներէն տրուած շնորհք մը չէ միայն», աւելցուց Սրբազան հայրը, «այլ պարտաւորութիւն մը ձեր անձը , ձեր եղբայրն ու քոյրը յարգելու, ձեր եկեղեցին, լեզուն, մայր հայրենիքն ու ձեր ծննդավայրը սիրելու, ու արժեւորելու դուք ձեզ»: Սրբազան Հայրը, իր սրտանց շնորհաւորական եւ շնորհակալական խօսքերը կ'եզրակացնէր դարձեալ խօսքը ուղղելով հայ երիտասարդութեան, «Արարատը ձե՛զ կը սպասէ, քալեցէ՛ք դէպի յաղթանակ, դո՛ւք էք մեր գրկուած հողին տէրը, քալեցէ՛ք միշտ առաջ»:

Փակման հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ բաժակներու եւ յուշատախտակներու բաշխում Շրջանային Մարզական յանձնախումբի ներկայացուցիչ՝ Եղբ. Յակոբ Սուլազեանի կողմէ: Տիգրան Ա. Քհնյ.Խոյեանի շրջուն բաժակը շնորհուեցաւ Պօսթոնի մասնաճիւղին որ առաջինը հանդիսացաւ բոլոր մարզախաղերու մէջ առաւելագոյն թիւով կէտեր հաւաքած ըլլալուն համար: Եղբ. Յովհաննէս Ստամպուլեանի շրջուն բաժակը շնորհուեցաւ Ֆլօրիտայի մասնաճիւղին, ամենէն բարելաւուած, տիպար եւ լաւ կազմակերպուած մասնաճիւղը ըլլալուն համար: Մարզիկուիի Իզապէլ Քէշիշեան արժանացաւ յատուկ յիշատակութեան, 100 մէթր վազքի անցեալի չափանիշը գերազանցած ըլլալուն:

Կէսօրէ ետք ժամը երկուքին, հանդիսավար Եղբ. Արա Նալպանտեան շնորհակալական խօսքերէն ետք կը յայտարարէր թէ Օգոստոս 2009ին տեղի պիտի ունենան համահայկական մարզախաղերը Հայաստանի մէջ, իսկ Օգոստոս 2010ին՝ 20րդ միջ-մասնաճիւղային խաղերը՝ Նիւ Ճըրզի նահանգին մէջ, ինչպէս նաեւ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Թ. Ընդհանուր սկաուտական բանակումը՝ Օգոստոս 2010ին Հայաստանի մէջ:

Սրբազան Հօր աղօթքէն ետք, սկաուտները հպարտօրէն տողանցեցին դաշտէն դուրս արտացոլելով մուտքի տողանցքի աստէն արտասանուած Ք. Ժպտունիի քերթուածի հետեւեալ տողերը.

*Դէմքիդ ժպիտ, աչքիդ հուր
Բարձրացի՛ր- բարձրացուր,
Քաջարի հոգիդ ցոյց տուր
Բարձրացի՛ր, բարձրացուր:*

Մակի Նալպանտեան